

ՀՏԴ 809.198.1

Հայոց լեզու

Միլվա Մինասյան ք.գ.թ., դոցենտ,  
ակ.Ս. Արթահանյանի անվան հայոց լեզվի ամբիոն  
ԷԼ-ՓՈՍՏ՝ silvaminasyan50@mail.ru

**ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՊԱՅՔԱՐԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԵԶՎԱՈՃԱԿԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒՀԻՆԵՐԻ ԳՈՐԾԵՐՈՒՄ  
(Ա. Բաղդասարյան, Ջ. Սարաջյան, Սոնա Համբարձում)**

Երիտասարդ ստեղծագործողներ Ալիսա Բաղդասարյանի, Ջարինե Սարաջյանի, Սոնա Համբարձումի չափաճոյում Արցախյան գոյապայքարը գեղագիտական ընկալելի կառույցներով է արտացոլված: Դրանք գեղարվեստական խոսքի միջուկային ու առմիջուկային սահմաններում հայրենի հողերի՝ արյան գնով պահպանելու խիզախություն, հարազատների ու մարդ արարածի՝ ազերու կողմից խեղման, կորուստի անհուն ցավեր են դրսևորում: Չափաճոյի այդ ցավոտ հատվածները հազեցած են պատկերային՝ այլաբերական ու արտահայտչական չափավոր միջոցներով: Հատկապես հնչեղ են շրջասույթները, դարձվածները, մակդիրները, փոխաբերությունները, որոնցով պատերազմական իրադրություն, մարդկային կորուստ, ցավ գաղափարներն են շեշտվում:

*Բանալի բառեր*- այլաբերություն, Արցախյան գոյապայքար, արցախյան կանանց գեղագիտական խոսքի արժանիքներ, դարձված, սակավանդամ և բազմանդամ կաղապարներ, միջուկային գեղագիտական կաղապարներ, փոխաբերություն, մակդիր, փոխանունություն, շրջասույթ:

*Сильва Минасян*

**ЛИНГВОСТИЛИСТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ В АРЦАХСКОЙ ОСВОБОДИТЕЛЬНОЙ БОРЬБЕ В  
СТИХАХ МОЛОДЫХ ПОЭТЕСС**

В поэзии молодых писателей Алисы Багдасарян, Зарине Сараджян, Соны Амбарцумян арцахская борьба отражена доступными средствами. Они в границах ядерных и соядерных моделей выражают отвагу и храбрость при защите родной земли, боль и протест против зверств азеров по отношению к родным и человеку вообще. Эти наполненные болью отрывки поэзии насыщены образными –иносказательными и выразительными средствами. В частности, перифразами, фразеологизмами, переносами: метафорой, метонимией и др., которыми подчеркиваются будни войны, человеческие потери, страдания.

*Ключевые слова:* аллегория, арцахская борьба за существование, художественные слова арцахских женщин, фразеологический оборот, малочленные и многочленные модели, ядерные художественные модели, метафора, эпитет, метонимия, перифраз.

*Silva Minasyan*

**LINGUOSTYLISTIC FEATURES IN THE POETRY ON ARTSAKH LIBERATION STRUGGLE  
(BY YOUNG POETESSES A. BAGHDASARYAN, Z. SARAJYAN, S. HAMBARDZUM)**

The depiction of Artsakh Liberation and Survival in the works by young poetesses A. Baghdasaryan, Zarine Sarajyan, Sona Hambardzum are marked by aesthetic matrices with limited members and multiple, full-fledged members. They reflect the courage of defending one's homeland at the cost of one's own life and the suffering caused by destruction of dear ones by Azeris via nuclear and near-nuclear matrices. These painful aesthetical examples abound with allegoric and stylistic poetic means, among them - inversions, idioms, epithets and metaphors.

*Keywords* – guarantee for survival of Artsakh Armenians, Artsakh Liberation Struggle, aesthetic speech by Artsakh women, parents - homeland, linguistic matrices with limited members and multiple members, nuclear and near-nuclear esthetic matrices, metaphor, allegory, epithet, inversion.

Արցախյան գոյապայքարը երեք տասնամյակից ավել է, ինչ հերոսաբար շարունակվում է տմարդի ազերի հրոսակների դեմ: Այս հզոր պայքարը հայրենի եզերքների պահպանություն է, որ հիմա փոքրացած չափերով մնացել է հնամենի մեծ աշխարհից: Արցախյան գոյապայքարի թեման իր արտացոլանքն ունի գեղագիտական հենքում՝ տեքստում<sup>1</sup> (խոսքաշար, խոսք): Դրանք բոլորն էլ ցավ ու խոհադատողական իմաստասիրություններ են, պայծառ ու համամարդկային երազանքներ՝ հղված մարդկությանը, անգույթ աշխարհին, որ դեռ ներում է չար մարդկանց, առավել ևս թուրք և ազերի հրոսակներին: Արցախյան հողերի պահպանության երաշխիքը հայության ներուժն է՝ հենված դաշնակիցների վերաբերմունքին:

Ցավը ի սկզբանե է մարդկության համար՝ ստեղծման օրից, բայց մարդ արարածը պայքարում է դրա դեմ: Քննաբանվող չափածո ստեղծագործությունները թաթախված են այդ թեմայով, որը լավկան չէ: Դրա հիմնական նպատակն արցախյան համամարդկային ցավը մարդկությանը հասցնելն է, դառն իրականությանը ծանոթացնելն է, անընդհատ կրկնվող թուրք-ազերական անմարդկայինը հիշեցնելն է, համաշխարհային մարդ-արարածին զգոնացնելն է: Արդի այդ չարությունը, վայրագության տեսքով, նստած է ազերիների հոգում, ու նրանք դա գործադրում են ցինիկաբար, և ամբողջ աշխարհը լռում է դրա դեմ: Այդպիսի թեմայի գագաթնակետերից մեկը Սոնա Համբարձումի «*Ավագ ուրբաթ*» բանաստեղծությունն է՝ իր անվանաճանաչողական մեծ արժեքներով, հատկապես հատուկ անունների հիշեցումը: Արվեստագետը հանդգնում է համամարդկային ցավի, մեղքի, *ծրագրվող և իրագործվող հանցանքի* պատասխանատուն, գեղագիտական հնարանքով, իրեն համարելու՝ օրինակ դառնալու գիտակից մարդ արարածի համար: Վայրագության առաջն առնելու պատասխանատվությունը յուրաքանչյուրի համար է, այսինքն՝ *արվեստագետների, մարդ կոչվածների* աններելի լռությունը, ներողամտությունն այդպիսի չարագործությունների դեմ հավասարագոր է համամիտ լինելուն:

Մեղքի զգացումը  
 Եվայից մինչև Պետրոսի ուրացումը,  
 Մինչև Հիսուսի ձեռքերին  
 Մեխ խփող խղճուկը,  
 Մինչև Գուրգենին կացնահարող  
 Մաֆարովը,  
 Մինչև Սիրիայում սևազգեստ  
 Գլխատվողների  
 Հետևում կանգնած կացնավորները,  
 Կարմրազգեստ  
 Գնդակահարվողների հետևում  
 Կանգնած զինյալ  
 Պատանի-երիտասարդները,  
 Մինչև Բեյզիայի  
 Օդանավակայանում երեք  
 Ահաբեկիչ-պայթեցնողները,  
 Մինչև այն թուրքը, ով  
 Թիրախավորեց ու կործանեց  
 Ռուսական ինքնաթիռը  
 Եգիպտոսում,  
 Մինչև Թալիշում կենդանի  
 Մարդկանց խեղդող *սրիկան*..  
 Բոլոր-բոլորն արթնանում են իմ մեջ  
 Եվ ես դառնում եմ հերթականը,  
 Գուցե միակը,  
 Ով իր մեջ սպանում է  
 Մարդկային մեղսագործ բնագորը,  
 Երևակայությունը՝  
 Մաքրագործվելու համար:  
 Աշխարհն այնքան փոքր է թվում

<sup>1</sup>. Գ. Բ. Զահուկյան, *Շարահյուսական ուսումնասիրություններ*, Ասողիկ հրատվչ., Ե., 2003 թ., 165 էջ, էջ 12:

Ինձ,  
 Որ այս ամենի համար  
 Բոլորս ենք պատասխանատու,  
 Ես եմ մեղավոր  
*Ամեն ծրագրված և*  
*Իրագործված հանցանքի համար,*  
 Ես եմ մեղավոր, որ  
*Քաղաքակիրթ աշխարհում*  
*Անկիրթ հանցանքներ են*  
*Ավելանում՝*  
 Կասկածի տակ դնելով  
 Անցյալից մինչև ապագա...  
 Եթե ոչ ես կամ դու, ո՞վ  
 Պիտի կանգնի ....  
 Քանի դեռ *ուրբաթ* է,  
 Մաքրե՛նք մեղքերը մեր:  
 Ամեն՝:

Ահա այսպիսի ընդհանրական, խորիմաստ ու համամարդկային բանաստեղծությամբ Արցախի վիճակն է համաշխարհային գեղագետների ու մարդկանց ուշադրությանն հասցվում: Բայց ցավոք, համամարդկային բոլոր խղճմտանքներով օժտվածներն էլ անուժ են գորեղ ղեկավար անգութների դեմ, որ թույլ են տալիս այդպիսի հակամարդկային երևույթներ:

Արցախյան չափաճոյում հատկապես կին ստեղծագործողների անհատական ոճերի յուրատիպությունում ընդհանուր է հայրենիքի ցավը: Դա նաև համամարդկային ցավ արտահայտելու պարզ ոճի անմիջականություն է, որտեղ երևում է բանարվեստի գեղագիտական պարզության մեծ ուժը՝ խարսխված շարահյուսական պարզ կաղապարների վրա: *Պարզ կամ հասարակ ոճին հատուկ են համեմատաբար պարզ և սակավանդամ կաղապարները և կաղապարների բաղադրիչների իրացման համեմատաբար սովորական և գործածական արտահայտությունները:*<sup>2</sup>

Ահա այս տիպի կառուցվածքով ոճում առաջնահերթ հասկացություն է հայրենիք և ծնող-գավակ հոգեբանական ապրումների գեղագիտական արտացոլանքը, որը համամարդկային զգացմունքների արտահայտություն է: Արցախյան երիտասարդ ստեղծագործող կանայք շատ են: Ուշադրություն դարձնենք բանաստեղծուհիներ *Ալիսա Բաղդասարյանի, Ջարինե Մառաջյանի, Սոնա Համբարձումի (Համբարձումյան)*՝ Արցախյան գոյապայքարն արտացոլող որոշ գործերի, որտեղ էականը պարզ ասելիքն է: Մանկությունից նրանց ունկերում արցախյան գոյապայքարի ահազարհուր ռազմական պայթյունների աղմուկն է, կանանց ողբը, տղամարդկանց շեշտ խոսքը՝ հագեցած հայրենիքի ինքնության առաջնահերթ պահանջներով: Դա նրանց գեղագիտական խոսքում առանձնահատուկ երանգներով է: Ահա ծանոթանանք *Ալիսա Բաղդասարյանի* մի պարզ ու սրտամոտ բանաստեղծության: Նախադասությունները հիմնականում լիասույթային (բարդ նախադասություն) կաղապարներով են, որոնց մեջ ընդգրկված՝ ասույթային (պարզ նախադասություն) կաղապարները քիչ սակավանդամ են, մեծ մասամբ՝ բազմանդամ և լրիվ ընկալելի: Դա հոգու ջերմ ու պարզ զգացումների արտահայտություն է ծնողական անգնահատելի արժանիքների վերաբերյալ, որն անմիջական, անպաճույճ մանկական զգացումների գնահատումներով է հագեցած: Գեղագիտական ամբողջությունում ընկալելի *միջուկ* (բուն խոսքը) և *առմիջուկ*<sup>3</sup> (բուն խոսքին հավելվող կառույցներ) հասկացություններ են: Օրինակ՝ Ա. Բաղդասարյանի «*Երբ հայրս*» բանաստեղծության *առմիջուկը* հետևյալ պարզ նկարագրությունն է.

Երբ հայրս բոլոր հայրերի նման  
 Պատերազմի դաշտ գնաց ինքնակամ,  
 Ես՝ փոքրիկ մանուկ, լացն աչքերիս,

<sup>1</sup>. Սոնա Համբարձում, *Գանգրահեր կարոտ*, Դիզակ պլյուս հրտկչն., Ստ., 2017 թ., էջ 61-62:

<sup>2</sup>. Գ. Բ. Ջահուկյան, *Շարահյուսական ուսումնասիրություններ*, Ասողիկ հրտկչ., Ե., 2003 թ., էջ 80:

<sup>3</sup>. Գ. Բ. Ջահուկյան, *Շարահյուսական ուսումնասիրություններ*, Միջուկային և առմիջուկային կառուցվածքային կաղապարները լիասույթում են՝ բարդ նախադասության մեջ: Մեր կարծիքով՝ *միջուկային* և *առմիջուկային* նորաբանությունները բանաստեղծության բովանդակության բաժանման համար հիանալի ոճագիտական գիտաբառեր կլինեն :

Հասկացա կյանքի խուրհուրդը վերին  
Եվ միշտ աղոթքով խնդրեցի Աստծուն,  
Որ հայրս կովից ողջ, առողջ գա տուն,  
Որ չպակասի գլխից գեթ մի մազ,  
Հայրս մեր գլխից մնա անպակաս: (8)<sup>1</sup>

Իսկ դրան հաջորդած փոքրածավալ հնչեղ, կուռ ու պարզ *միջուկը*, հաշմված (մի աչքը կորցրած) հոր վերադարձն է (շրջապատի մարդկանց համար աննկատ երևույթ է դա, իսկ տիրոջ համար՝ նշանակալից կորուստ):

Եվ ահա մի օր *գնդակին զոհած*

*Մի աչքի լույսը*, հայրս դարձավ տուն... (ն. տ.)

Այնուհետև էլի *առմիջուկով* (հիմնականին՝ իմաստաբանական ելակետին, հավելվող խոսք) կարճ նկարագրվում է մոր ուրախությունը, բայց զավակի՝ հեղինակի *միջուկային* ասելիքը մնում է չասված (կախման կետեր լռություն):

Ա. Բաղդասարյանի արտահայտածը ժողովրդական մտածողությամբ մարդկային կյանքի համար թանկ արժեցող *աչքի լույս* հասկացությունն է, որը զինվորը հայրենիքին է զոհել (աստված խնայել էր մյուսը): Դստեր չնշված անպարփակ ուրախությունը (հորը ողջ տեսնելը) սգակիր շրջապատի համար *լռության* գեղագիտական ձևով է տրվել: Մարդկային զգայացունց ցավոտ իրադրությունում դա պահվածքի բարեկիրթ արտահայտություն է: Այստեղ գործածված են նաև ժողովրդական մտածողությամբ հանրահայտ դարձվածներ: Դրանք դարձվածային կապակցություններ են՝ *Հայրս մեր գլխից մնա անպակաս* (ողջ), *աչքի լույսը* (տեսողություն), *գլխից գեթ մի մազ չպակասել* (չվնասվել), *պատերազմի դաշտ* (կռիվ), *գնդակին զոհած/ել* (կորցնել):

Ա. Բաղդասարյանի այս բանաստեղծությունում պատերազմին առնչվող *մակդիրներից* են՝ *գոյականական՝ պատերազմի* դաշտ, *կյանքի* խուրհուրդը վերին, *բայական՝ գնաց ինքնակալ*: Բառակապակցությամբ արտահայտված *մակդիր* է՝ *գնդակին զոհած* Մի աչքի լույսը:

Արցախի համամարդկային ու ազգային ցավը Զ. Սառաջյանի գեղարվեստում յուրահատուկ խտացված *ընդհանրականով* է արտահայտված, որը պարզ, ընկալելի ու հոգեթով մեղմ գեղագիտականն է: Նրա ասելիքի *միջուկը* իշխում է ամբողջ կուռ խոսքում: Որոշ գործերում նույնիսկ չկա *առմիջուկ*՝ բուն ասելիքի շուրջ արտահայտված հավելյալ գեղագիտական կառույցներ. դա տրամաբանական-գեղագիտական է: Ըստ այդմ էլ նրա որոշ բանաստեղծությունների իմաստասիրությունն իշխող է և ակնհայտ հույզն ընթերցողին մտորել է տալիս.

Մշուշված աչքերս գարուն են փնտրում,  
Բայց ձմեռը հաջորդում է ձմռանը,  
Ծաղիկն այդպես էլ կմնա չբացված,  
Բառն այդպես էլ կմնա չասված,  
Երբեք չեմ տեսել ծաղիկը բացվի անարև,  
Իսկ բառը՝ առավել ևս,  
Իսկ հոգին՝ առավել ևս,  
Բոլոր ծաղիկներն էլ արև են տենչում,  
Ծաղկաթերթերս թափվում են ափիս մեջ,  
Իսկ երկնքից դարձյալ ձյուն է մաղվում...<sup>2</sup>

Այստեղ տարվա եղանակները՝ *ձմեռ, գարուն* գոյականները, *պատերազմ* ու *խաղաղություն* են խորհրդանշում, որը *փոխաբերությամբ* է բնութագրվում (նմանություն), *ծաղիկը՝ կյանք* (փոխաբերություն), *բառը՝ արվեստ* (փոխանունություն՝ առնչություն), *ձյուն* բառն ուղղակի ու փոխաբերական իմաստներ է արտահայտում (վերջինը՝ *վտանգ*), *արևը՝* պայծառ, խաղաղ *կյանք*: Ընկալելի լեզվաբանական այս խտացվածքն *այլաբերությամբ* մեզ է մատուցում բանաստեղծուհու ներքին բողոք խոսքն անգութ ազերու նկատմամբ՝ *պատերազմի վտանգ չլինի* (Ծաղկաթերթերս թափվում են ափիս մեջ, այսինքն՝ մտածումներն ափով՝ ձեռքով, բռնած գրիչով թղթին է հանձնվել, ուրեմն՝ *խաղաղությունը երազանք է մնում*. նախորդ տողում նշված *ծաղիկ, արև* բառերն ուղղակի իմաստ և այլաբերված *երիտասարդություն կյանք* և *խաղաղություն* են խորհրդանշում): Այլաբերական ձևերից են նաև *մակդիրները*, որոնք մակադրյալի հետ այլաբանությամբ պատերազմական ժամանակում կյանքի գեղեցիկ ռիթմի չգոյությունն են գեղագիտորեն

<sup>1</sup>. Ա. Բաղդասարյան, *Գրիչս երազ է տեսնում*, Վաչագան Բարեպաշտ հրտկչ., Ստ., 2014 թ., 240 էջ, էջ 8:

<sup>2</sup>. *Եղիցի լույս*, N01, 2016 թ., էջ 4:

նկարագրում: Բանաստեղծական խոսքն այստեղ յուրատիպ այլաբերական շարույթներով է տրված:

Սոնա Համբարձումի գեղագիտական գործերում համեմատաբար ավելին են նշված քննարկվող թեմայով բանաստեղծությունները: Արցախյան գոյապայքարին նվիրված գործերից է «Վերադարձածները»<sup>1</sup>, որի պարզ ընդհանրացված ու խտացված կառույցներում ի ցույց են հանվել պատերազմական ահազարհուր գործողություններից կրած վնասները: Հատկապես մարդ արարածի տարբեր տիպի հաշմվածություններ են հանգիստ և զրուցատիպ մատուցվում, որոնց պատկերային ձևերը ցնցող ու ցավալի են այդ ամենը տեսածների, խոր ընկալողների համար: Ներկայացված ընդհանրական կերպարներն արցախցի տարբեր տարիքի ու սեռի մարդ արարածներ են: Հայրենասիրական անսահման բարձր հասկացությունների ընկալման է մղում այդ գործը՝ նվիրվածություն, տոկունություն, դիմակայելու ունակություն, հայրենիքը պահպանելու վսեմ գիտակցություն, խաթարվածը վերաշինելու համառություն, ունեցածը սերունդներին փոխանցելու մարդկային վսեմություն, հայրենիքը պաշտպանելու անկոտրում կամք: Այդ ամենն արտահայտված է Արցախի հետպատերազմյան գոյատևման գեղագիտական խտացված պարզ նկարագրություններով, և վերջում խոհախմբաբանական ընդհանրացմամբ բանաձևվում է մեր երկրի էությունը՝ հայրենի Արցախը՝ *Պատերազմից վերադարձած երկիր է և Կորուստներով...* կանխում է՝ *վերադարձը// Նոր պատերազմի:* Նրա առօրյան առլեցուն է մահազու պատերազմական անջնջելի հիշողություններով ու ցավալի հետքերով:

Պատերազմից վերադարձած պապը

Իր չերևացող ձեռքերով՝

Շոյում է կնոջ պատկերը՝ սև

Շրջանակում:

Պատերազմից վերադարձած հայրը

Իր չերևացող ոտքերով՝

Քայլում է պուրակում՝

Փոքրիկի ձեռքից բռնած:

Պատերազմից վերադարձած մայրը

Ականջներում դրդազոցող

Մարսափազրու ձայների մեջ

Փնտրում է դռան մի զանգ՝

Որդիների տունդարձի:

Պատերազմից վերադարձած

Եղբայրը

Իր կույր աչքերով՝

Տեսնում և արտասվում է

Ավերված տան համար:

Պատերազմից վերադարձած երկիրը

Մահմանում անվերադարձ

Կորուստներ է ունենում՝

Կանխելով վերադարձը

Նոր պատերազմի:<sup>2</sup>

Քսաներկու տողանոց այս տրամաբանական ցնցող բանաստեղծությունում պատերազմի արհավիրքն արտացոլող *գոյական, բայ* տասնմեկ *շրջասույթ* կա: *Շրջասություն* լեզվաբանական միավորը մշակվել է *սովետ* ճարտասանների կողմից<sup>3</sup> (հատկապես Գորգիաս Լևոնացու, մ. թ. ա. 488-379): Հայ ոճագիտության մեջ Պ. Պողոսյանն է առավել մանրամասնված անդրադարձել այդ հարցին, բայց նաև ընդունել, որ *խոսքի համար շրջասույթը զարդ չի դառնում*: Այս ոճական այլաբերական միավորը լեզվաբանական բառարանում *շրջասույթ* և *շրջասություն* գիտաբաներով մեկ հասկացություն է դիտարկված. «Ոճաբանական հնար, երբ պարզ հասկացությունն արտահայտվում է նկարագրական եղանակով, այսինքն՝ առարկայի կամ երևույթի իսկական

<sup>1</sup>. Սոնա Համբարձում, *Գանգրահեր կարոտ*, Դիզակ պլուս հրտկչն., Ստ., 2017 թ., 184 էջ, էջ 179:

<sup>2</sup>. Ն. տ., էջ 17:

<sup>3</sup>. Պողոսյան Պ., «Խոսքի մշակույթի և ոճագիտական հիմունքներ», ԵՊՀ հրտրկչ., Ե., 1990, հ. I, 420 էջ, էջ 23, հ. II, 396 էջ, էջ 84-88:

անվանումը փոխարինվում է նրա այս կամ այն հատկանիշն ընդգծող որևէ դարձվածով<sup>1</sup>»։ Ոճագետ Ֆ. Խլղաթյանը շրջասությունն և շրջասույթ լեզվաբանական տարբերակներով է բնութագրել: Նույնիսկ մի տեսակը համարել է պարզաբանում, երբ «...խոսքի մեջ եղած որևէ հասկացություն կրկնվում է նկարագրական-բացատրական ձևով<sup>2</sup>»:

Շրջասությունը և շրջասույթը լեզվաբանական տարբերակներ են: Շրջասությունը փոխաբերության տեսակ է, ոճական դարձույթ, երբ որևէ առարկա կամ երևույթ ուղղակի անվանելու փոխարեն տրվում է նրա ավելի ծավալուն, նկարագրական բնութագրությունը ... երբեմն նաև կամայական վերաբերմունքը տվյալ իրողության նկատմամբ, ինչպես նաև խոսքին հաղորդում որոշակի հնչեղություն և պատկերավորություն<sup>3</sup>: Պ. Բեդիրյանը շրջասություն գիտաբանը բնութագրել է հետևյալ կերպ՝ «Շրջասությունները շրջուն արտահայտություններ են, բառեր կամ բառակապակցություններ, որոնցով առարկան կամ գործողությունն անուղղակիորեն ենք անվանում<sup>4</sup>»:

Սոնա Համբարձումի «Վերադարձածները» բանաստեղծությունում գործածված այդ տիպի գեղագիտական օրինակների իմաստաբանական կարևոր առանձնահատկությունը եղածը նկարչական մանրամասնությամբ անուղղակիորեն ներկայացնելն է: Ընդհանրապես շրջասությունները քիչ են ոճական մեկնությունների արժանանում: Հեղինակը լսած, տեսած ահազարհուրը մեղմացրած այնպիսի գեղագիտական այլաբերված ոճով է նկարագրել, որ ցավալին դուրսասահ ու մեղմացրած է ներկայացվում, բայց ընկալվում են ահավորները: Ահա այդ շրջասությունների իմաստաբանական արժեքները չերևացող ձեռքեր (հաշմված՝ բացակայող վերին վերջույթներ), չերևացող ոտքեր (հաշմված՝ բացակայող ստորին վերջույթներ), (հաշմված զինվորը) շոյել կնոջ պատկերը սև շրջանակում (պատերազմի մասնակից հաշմված ամուսնու վերադարձը և թիկունքում ուրվակոծությունից նահատակված կնոջ սգո հիշատակ նկարը տեսնելը), ականջներում դրդազցող սարսափազդու ձայներ (պատերազմական ահազդու աղմուկից տուժած լսելիք), դրան մի գանգ փնտրել (դուռ չունեցող, պատերազմից ավերված տուն հիշել// սպասել մեկին), որդիների տունդարձի դրան մի գանգ փնտրել (նահատակված որդիներին սպասել), պատերազմից վերադարձածի կույր աչքեր (տեսողության կորուստ ունեցած, հաշմված զինվոր), կույր աչքերով տեսնել (հիշել), պատերազմից վերադարձած երկիր (գոյապայքար մղած երկիր Արցախ), սահմանում անվերադարձ կորուստ ունենալ (սահմանապահի զոհվելը), նոր պատերազմի վերադարձը կանխել (համապատասխան զինուժ ունենալ թշնամու դեմ՝ խաղաղություն պահպանելու համար): Այս հեղինակային, մեծ մասամբ նորակազմ, գեղագիտական շրջասույթները խոր մտածողության ազդեցիկ երաշխիքներից են: Պատերազմական ահավոր գործողությունների հետևանքներն Արցախում առկա են ամենուր: Սոնա Համբարձումի ուժ ու կենսունակություն պարունակող խոսքարվեստը գորեղ է հենց դրանց նկարագրություններով:

Արցախյան գոյապայքարը ցնցող պատահիկներով է տրված «Իմ բանաստեղծությունը» ծավալուն (4 էջանոց) գործում: Դա հեղինակի ու նրա նման տուժած բազմաթիվ սահմանամերձ ընտանիքների ճակատագրի նկարագրությունն է : Տասնյոթամյա հորեղբոր կորուստը՝ տատի սուգի հիշեցմամբ է տրված (Արա մ, Արա մ... Թուրք ընկերների գործն էր):

1988-ն էր, երբ արցախցիները  
Բռունցքներով միացում էին  
Գոռում,  
Չայների մեջ լսեցի քրոջս  
Հետծննդյան լացը...  
Գրիգոր պապիկիս մարմինն է՝  
Գետնին.  
-Լավ է առաջնեկիդ տեսա, տղա՛ս...  
Տատս անընկեր մնաց...  
1990-ի վերջերն էր, երբ  
Արցախցիները պայքարում էին

<sup>1</sup>. Պետրոսյան Հ. Զ., Գալստյան Ս. Ա., Ղարազյուլյան Թ. Ա., «Լեզվաբանական բառարան», Հայկ. ՍՍՀ ԳԱ հրտկչ., 1975 թ., 320 էջ, էջ 245:

<sup>2</sup>. Խլղաթյան Ֆ. Հ., «Ոճաբանական բառարան» (II հր.), Ձանգակ հրտկչն., Ե., 2000 թ., 176 էջ, էջ 131, 150:

<sup>3</sup>. Եզեկյան Լ. Կ., Ոճագիտություն (ուսումնական ձեռնարկ), ԵՊՀ հրտկչ., Ե., 2003 թ., էջ 340:

<sup>4</sup>. Բեդիրյան Պ. Ս., Հայերեն շրջասույթների բառարան, Էդիթ պրինտ հրտրկչ., Ե., 2006 թ., էջ 3:

Անկախության համար  
 Եվ ես լսում եմ իմ հետծննդյան  
 Լացը...  
 Երբ  
 Հայրս նոնակը ձեռքին սպասում էր.  
 Եթե մեքենան է գալիս՝ ընտանիքին  
 Տեղափոխում էր,  
 Եթե թուրքերն են մտնում  
 Մատաղիս՝ պայթեցնում էր...  
 Մենք հեռացանք գյուղից՝  
 Ուտաբոբիկ...  
 Իսկ հայրս աչքերի լույսով վճարեց  
 Իր հայրենիքի պաշտպանության  
 Գինը:<sup>1</sup>

Ինչպես նախորդ, նմանապես այս ցավոտ ու պարզունակ, սրտակեղեք ու նկարչական ճշգրտությամբ տրված մագապուրծ արցախցիների իրավիճակն է, մեր տեսածի հակիրճ նկարագրությունը: Այստեղ ևս խոսուն են շրջատությունները՝ կորցնել տասնյոթամյա հորեղբորը (ազերիների կողմից գազանաբար սպանված), թուրք ընկերների գործը (վայրենաբար սպանություն), ընտանիքի հոգիներում ամեն ինչ փուլ գալ (տնավեր լինել, գաղթել), բռունցքներով միացում գոռալ (գոյապայքարի ելած արցախցիների սկզբնական պայքարի, պահանջի միամիտ ձևը), Չայների մեջ լսել քրոջ հետծննդյան լացը/ լսել (իմ) հետծննդյան լացը (ծնունդ, նորածին), Գրիգոր պապիկի մարմինը գետնին (մահ), տատն անընկեր մնալ (պապը մահանալ), ուտաբոբիկհեռանալ գյուղից (Արցախյան գոյապայքարի ժամանակ մագապուրծ գաղթել բնակավայրից), աչքերի լույսով վճարել հայրենիքի պաշտպանության գինը (պատերազմում հաշմվել տեսողությունը կորցնել):

Հեղինակի ծննդավայրին նվիրված «Մատաղիսում» հուզաթաթավ բանաստեղծությունում ազերիների կողմից կրած հին (30-25 տարի առաջ) ու նոր (երկու տարի առաջ) ցավալի և ահազարհուր ուժբակոծությունների հետևանքներն է հայրենի գյուղում նշվել: Նոր արհավիրքի շոշափելի ցավն անգույթ ազերի կիրառեց սահմանամերձ Թալիշ գյուղի և հեղինակի ծննդավայրի՝ Մատաղիսի տարածքներում Տրտուի Թարթառի արևելյան ավամերձ տարածքներում: Արյունաբեր թշնամին հեռահար հրետանակոծել էր նաև Մարտակերտը, Մարտունու շրջանի բավականին տարածքներ, դպրոց հաճախող երեխաներ սպանել: Ահա հնչել մի հատված.

Ես այստեղ եմ...  
 Մանկությանս հուշերի մոտ,  
 Որ 88-յան պատերազմի պատճառով  
 Խեղվեց,...  
 Այստեղ սահմանին այդքան մոտ  
 Այս հրաշք օրրանում,  
 Երեք լուռ մահարձան  
 Ինձ են հետևում...  
 -Հողը կարոտում է մշակի ձեռքին...  
 2016-ի ապրիլը նոր 88 էր (1988),  
 Ինձ պես նորածինների համար  
 Նոր անդամահատ էր  
 Մանկության հուշերի:  
 ...  
 Իմ սահմանապահ հո՛ղ,  
 Իմ կարոտալուռ տո՛ւն,  
 Իմ անկատար մանկություն՝ ւն,  
 Իմ Մատաղիս ա՛:<sup>2</sup>

Արցախում եղած նոր պատերազմն ազերիների վայրագության նոր արտահայտությունն էր, որի արտացոլանքը ցույց տվող այս բանաստեղծության ընդհանրականը հայրենի հողի

<sup>1</sup>. Ն. տ., էջ 27-28:

<sup>2</sup>. Սոնա Համբարձում, *Գանգրահեր կարոտ*, Դիզակ պլյուս հրտկչն., Ստ., 2017 թ., 184 էջ, էջ 23-24:

գնահատումն է, մարդկանց անդառնալի նոր կորուստների գեղագիտական անպարփակ, բայց ցավով հիշեցնող կսկիծը: Ահագարհուր պատերազմական արհավիրքները հայ ժողովրդի դարավոր ցավերից են, որոնք սարսափելի չափերով կրկնվում են: Սոնա Համբարձումի վերոհիշյալ «Մատաղիսում» բանաստեղծության հետևյալ *շրջասություններում* յուրատիպ նկարագրություններ ու բովանդակություն են ստացել՝ *88-յան պատերազմի պատճառով խեղվել* (լիարժեք չլինել, նախորդ փառահեղ կացությունը չունենալ), *հողը մշակի ձեռքի կարոտել* (սահմանային, թշնամու գնդակոծության թիրախ դաշտերի չմշակվելը// գյուղատնտեսական աշխատանք կատարող տղամարդկանց նահատակվելը), *2016-ի սպրիլը նոր 88 էր* (արցախյան գոյապայքար առ այսօր// ազերիների պատերազմական նոր հարձակում), *նորածինների համար մանկության հուշերի նոր անդամահատ* (պատերազմից խեղված մանկություն), *սահմանապահ հող* (անմշակ, զինվորների պահակակետման ծառայող հողային տարածք), *կարոտալուռ տուն* (անմարդաբնակ տուն), *անկատար մանկություն* (պատերազմական շրջանի մանկություն): Այս բանաստեղծությունում նաև հեղինակային *նորակազմություն* կա *կարոտալուռ* ցավառատ բառը, որը հեղինակային բառագործածության պրպտուն ու հմուտ մտքի արտահայտություն է:

Արցախյան գոյապայքարը հիշեցնող սակավ մակդիրները հիմնականում *ածականով* են արտահայտված՝ *լուռ* մահարձան, *սահմանապահ* հող, *կարոտալուռ* տուն (անմարդաբնակ), *անկատար* մանկություն (*Ես կարոտում եմ*), տատիս *լեղապատառ* սուգը (*Իմ բանաստեղծությունը*): Գոյականով արտահայտված մակդիրը հազվագյուտ է, ինչպես՝ *մշակի ձեռք* (*Ես կարոտում եմ*) և այլն: Փոխաբերությունները Արցախյան գոյապայքարին նվիրված գործերում չափավոր են և մեծ մասամբ շրջասություններում արտահայտվածներն են (հատկապես՝ *Վերադարձածները*):

Ապրիլյան պատերազմի ահագարհուր ու դժնի հետևանքի համամարդկային արտացոլանք է «*Ավագ ուրբաթ*» բանաստեղծությունը (հողվածի սկզբում ամբողջական տրված է): Այն մարդ արարածի ստեղծման օրից առ այսօր իրագործված չարությունների մասնակի, բայց հնչեղ նկարագրություններ է, համամարդկային ընկալելի ու ընդհանրական բանաձևում՝ մարդ արարած կոչվածը չպիտի հանդուրժի, թույլատրի սխալը, առավել ևս՝ *գազանաբարոն*: Ազերիների գործադրած վայրագությունն ահավորն է (քնած մարդուն կացնահարողին համաշխարհային իրավաբանական դատավարությունից ազատել, բերել են իրենց չարաբարո երկրում հերոսի կոչում տվել, թալիշյան հիվանդ, տարիքով գերեվարած մարդկանց անկողնում գազանաբար հոշոտել են): Բանաստեղծուհին դա որակել է մարդկության սահմաններից դուրսի անվամբ՝ մեր բառապաշարի շերտերից իրադրականին համապատասխան գոեհկաբանությամբ՝ *սրիկա*<sup>1</sup> Թալիշում կենդանի// Մարդկանց խեղող *սրիկան*...<sup>1</sup>: Սա նաև *շրջասություն* է և հասկացվում է *ազերի*: Դա մահմեդականության կողմից քրիստոնյաների դեմ հրահրված պատերազմի համաշխարհային մակարդակի վերաբերմունք է, արժանի ընդհանրացում-որակում: Վերնագիրը՝ *Ավագ ուրբաթ*, խոսուն *շրջասություն* է: Այն պատմականորեն *սուրբ օր* համարվող է՝ *մեղքերի քավություն* տալու օր, *հիվանդներին բուժելու* օր և այլն:

Այսպիսով, երիտասարդ բանաստեղծուհիների արցախյան գոյապայքարն արտացոլած չափածոյում գեղագիտական լեզվառձական պատկերներից հնչեղ են *մակդիրները*, *փոխաբերությունները*, *շրջասությունները* և սակավ՝ *դարձվածները*, *փոխանունությունները*:

<sup>1</sup>. Ն. տ. էջ 61: